Դ.

Քանի՛ ու քանի՛ կ՛ասեմ թէ՝ Հերիք ղահըր տաս ուտել.
Ձեռկունքս ի ծոցիկս ի վար քու տարտէդ արիւն է հոսել.
Մըսիկս է լեղի դարձեր, շըներուն կու ձգեմ՝ չեմ ուտել,
Հիմա քո արե՛ւ ասեմ, քանի՛ դու մեզ ես պիտացել:
Իմ եարն է քարամ արել ու խրկել ըզմեզ հարցուցել.
«Տէրտեր աս մեր շատ սիրուն, ա՛յ հոգեկ, ո՞նց ես դիմացել»:
Իմ եա՛ր, քո արե՛ւդ ասեմ, միս չունիմ, ոսկորքս է մաշել.
Կաթիկ մի արիւն ունիմ, քո սիրուդ ան ալ ցամաքել:

Ձ.

Հընցեղ եմ ի քո սիրուդ որ տըղեկըն ծիծ չէ կերել,
Մարիկըն վաղուց մեռել ու տըղեկն որբուկ մընացել.
Ձո՛ւր տուր իմ ծարաւ լերդիս, քո սիրուդ ի տապն եմ ընկել.
Խօսէ՛ որ առնեմ իխրար, ես յետի նէֆէսս եմ եկել:

Է.

Երթամ չի կենամ ի հոս, ուր երթամ հոն ալ չի կենամ.
Երթամ քանց Հընռոմն ի վար, վընտարիմ այլ իսկի չիգամ:
Թէ գան ու զիմ տեղն ասեն, նա հեռու եմ՝ ա՛յլ հեռանամ.
Թէ գան ու զիմ տեղին ասեն, թէ զենճիլն եմ՝ կտրեմ ու գամ:

Ը.

Հա՛յ իմ մազդ ուռի մորճիկ, չորանա՛ս թէ զիս մոռանաս.
Փուտ ու ճիճուի կեր դառնաս թէ ծոցիկդ այլ մարդու բանաս.
Ահա քեզ գիշեր կուգայ, երազին դու գէշ տեսանես,
Ամէն առաւօտք լուսին զինք թողուս եմ ի յիս դառնաս:

Թ.

Իմ հին սէր ’ւ առջի յորդոր, իմ արե՛ւ եւ իմ աստընուոր,
Իմ մանկութենէ սիրած, մի՛ կենար ինձ հետ նենգաւոր.
Երթամ թուխ ու լուրջ հագնիմ, ի սարերդ ընկնիմ սեւաւոր,
Ձինչ ես եմ՝ թող դու լինաս, սիրտըդ սեւ ի բախտէդ մոլոր:

Ժ.

Աղուո՛ր, իմ հազա՛ր աղուոր, դըրախտին բեհեշտի խնծոր,
Ծախրէ եղէգին մէջէն ես քաշած՝ քան զլատիֆդ աղուոր.
Ձուներդ ես աղեղ արել ու զաչերդ ուղօշ նետաւոր.